Է. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 16 ՈԿՏԵՄԲԵՐ 1904 — ԹԻՒ 662

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Դանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ ի վերջին երեսին համար 20 սանթիմ ի. երեսին ամէնի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վաճառքի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկել խմբագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Yarna (Bulgarie)

Պուրկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեկ տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԱՐԴԵՕՔ ՀԱՒԱՏԱՆՔ

Բուլգարական «Ուտրէննա պօշտա» թերթի 21 թիւում կարդում ենք հետեւեալ հեռագիրը Պետերբուրգից.

«Կառավարութիւնը Սիմֆիրոպոլի հայ եկեղեցու վարչութեան արտօնել է ազատօրէն կառավարել հայկական դպրոցները. Այս կարգադրութիւնից եզրակացվում է որ շուտով պիտի փոխվի այն որոշումը, որի հիման վրա եկեղեցական կալուածների կառավարումը յանձնվում է պետական վարչութեան».

Սիմֆիրոպոլը գտնվում է Խրիմում, բուն հայկական կեդրոնից Անդրկովկասից և Կովկասից դուրս. այնպէս որ ռուս կառավարութիւնը ոչ մի կասկած կարող է ունենալ՝ թէ պետութեան այդ մասում երբ եւ իցէ հայերը իրեն համար, քաղաքական տեսակէտով, կարող են վտանգաւոր տարր դառնալ, ու այդ պայմանը աչքի առջեւ ունենալով մենք վարանում ենք հաւատալ հեռագրի վերջի մասին. այսինքն թէ հայ եկեղեցական կալուածները կարող են վերադարձվել հայ եկեղեցական վարչութեան.

Մենք սոյն էջերում մի երկու անգամ նկատել ենք թէ ներկայ ներքին գործոց նախարար իշխան Միրսկին միայն խօսքով չէ երեւում Պլէվէի ուղղութեան հակառակ տրամադրութիւններով նախարար, այլեւ գործով թէ լեհերի, թէ հրէաների և թէ ռուսների վերաբերմամբ.

Մենք նկատել էինք նաեւ նախորդ հաւաքներից մէկում, թէ Միրսկին միայն հայերին բան չէ խոստանում իր տեսակցութիւնների մէջոցին, իսկ այսօր այս հեռագիրը, եթէ նրա տուած ուրախալի լուրը ճիշտ է, փաստում է թէ ներքին գործոց նախարարը իր նախորդից հարստահարված հայերին էլ չէ մոռացել և ուզում է իր զատաշունչ գոյն ունեցող տրամադրութեան արդիւնքներից հայերին էլ էլ ըմբոշխնել:

Միրսկին ըստ երեւոյթին, գոնէ առ այժմ, որոշել է ռուսական խիստ ռէժիմի բացած խրամատները, պետութեան և հպատակների միջեւ, լցնել. գեղեցիկ գործ է և օգտակար թէ հպատակների և թէ ռուսական միապետութեան համար. սակայն հայերի և ռուս կառավարութեան միջեւ շատ մեծ խրամատ է բացվել շնորհիւ վայրենի Գալիցինի և չանսատակ Պլէվէի. Միրսկին կորովը պիտի ունենա՞յ այդ մեծ խրամատը լցնելու, եթէ նոյնիսկ իր տրամադրութիւնների մէջ անկեղծ լինի.

Արդեօք հաւատա՞նք.

*
**

Եթէ ռուս կառավարութիւնը իրապէս որոշել է հայերին հաշտութեան ձեռք մեկնել, վերադարձնել Երեւանի վայելած ինքնորոյն յառաջադիմելու միջոցները, այն ժամանակ ռուսահայերին էլ մնում է խրատվել անցեալից և աւելի եռանդով յառաջադիմելու գործին ձեռնարկել, միշտ մտածելով որ հայկական վերածնութեան լոյսը միայն Տաճկահայաստանի վրա դնելով ընդհանուր հայկական վերածնութիւնը միշտ կասկածի տակ կը մնայ. որովհետեւ հայութեան այդ մասը, չնայելով իր հերոսական ճիգերին, շատ թոյլ, շատ անպատրաստ է թէ բարոյապէս և թէ նիւթապէս, ընդհանուր հայկական տանելի կեանք ստեղծելու համար.

ՎԱՐԴՕ

ԱՆՊԱՏԻՄ ՄՆԱԼՈՎ ԱԶԱՏՎՈՒՄ Է

Պետերբուրգից հոկտեմբեր 13ին հեռագրում են «Ուտրէննա պօշթա»ին հետեւեալը.

«Գեներալ Ֆրէզէն որը մինչեւ օրս Կովկասի կառավարչապետի օգնականն էր, փոխարինում է Սվեաբոգոլսկի Միրսկուն նշանակվելով Վիլնայի նահանգապետ».

Ֆրէզէն՝ Կովկասի ամենագլխաւոր հայատեաց պաշտօնեան էր, ու ջերմ պաշտպանը տխրահռչակ Բոգուսլավսկիի, որը զոհ դնաց հայ տերօրիստի գնդակին. Նա էր որ Երեւանի նահանգապետ եղած ժամանակը ծաղրում էր Հայրիկին, հայոց կաթողիկոսի վարկը հնար եղածի չափ ոտքի տակ տալիս. Նա էր որ իբրեւ Կովկասեան հին պաշտօնեայ Գալիցինին խրախուսում էր վերջինիս հայատեաց ուղղութեան մէջ և նրա հրամանները, թէկուզ ամենայիմար, լիովին կատարում հայերին խեղդելու, ջնջելու գաղափարով տոգորված. Վերջապէս նա մի պաշտօնեայ էր որը ամենից առաջ պէտք էր արժանանար Կովկասահայի գործնական վրէժխնդրութեան, քան Գանձակի նահանգապետը, էջմիածնի և Սուրբ Լուսաւորի գաւառապետները և ուրիշները.

Մի կողմից շատ յաւալի է որ Ֆրէզէի նման մի անպիտան բարձրաստիճան պաշտօնեան կարողանում է իր մարթը ողջ առողջ ազատել Կովկասից և գնալ բազմիլ Վիլնայի նահանգապետի աթոռի վրայ և իր վավաշտութեան յաղուրտը տալ Բոգոսլովսկիի կնոջից աւելի սիրուն լեհուհիներով. միւս կողմից էլ զոհացուցիչ կարելի է համարել որ Ֆրէզէ կոչված ռուսական ցած պաշտօնեայի տիպը այլեւս չը պէտք է կարողանայ շնչել Կովկասեան մաքուր օդը և իր աղտոտ արտաշնչումով այն աղտոտել.

Ռուս կառավարութիւնը ինչպէս երեւում է լրջօրէն մտածում է Կովկասը մաքրել հային ատելի պաշտօնեաներից. Գալիցինը որ բաւական ժամանակից ի վեր բացակայ է Կովկասից, դեռ չէ վերադառնում, ու խօսք էլ չկայ թէ երբ պէտք է վերադառնայ. հայերին զոհացում տալու եթէ անկեղծ տրամադրութիւն կայ ռուս բարձրագոյն շրջանակներում, պէտք է որ Գալիցինն էլ հեռացվի և նրա ի վնաս հայերի կատարած գործերը վերաշտկուին ի նպաստ հայերի.

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԽՄԲԱԳՐԻՆ

Յարգելի խմբագիր,

Մեզ շրջապատող հանգամանքների լուրջ դիտողը պէտք է խոստովանի այն անհերքելի ճշմարտութիւնը թէ՝ բալքանեան փոքրիկ պետութիւնները, որոնք մտած են յառաջդիմութեան ճամբու մէջ, այժմ գտնվում են մի վտանգաւոր փաստիզում որը մի կողմից սպառնում է նրանց զարգացման մի կողմից էլ նրանց իբր անկախ պետութեանց ճակատագրին.

Զանազան կողմերի վտանգաւոր ազդեցութիւնները ցոյց են տալիս իրենց կորստաբեր ներգործութիւնը, եւ այդ քանի ժամանակէ ի վեր արտայայտվում է շատ սուր կերպով.

Հիւսիսային ազդեցութիւնները նշանակելի չափով փոխում են քաղաքական ցուցարարը եւ մօտիկ անցեալի փաստերը պերճախօսութեամբ հաստատում են այդ.

Այդ երեւոյթի իրը հետեւանք ներկայանում է Ռիլի միւս կողմում գտնվող մարտիրոսի անտանելի կացութեան ամրապնդվելը. եւ որը պէտք է շարունակվի ի վնաս ազգային լուրմրոնված շահերի.

Այդ է որ եւրոպական քաղաքակրթված տարրերին, առանց քաղաքական գաւանանքների խտրութեան, ստիպել է բարձրաձայն եւ վճռողական կերպով խոստովանել ու յայտարարել թէ. արեւելեան հարցը կոչված սեռ քաղաքական խնդրի լուծումը կայանում է բալքանեան փոքրիկ պետութիւնների դաշնակ ուժիւն ստեղծելու մէջ. որը պէտք է ամրապնդէ նրանց ներքին ազատութիւնը, իրենց արտաքին անկախութիւնով.

Մենք. այդ երկիրների զաւակներս. մօտից դիտողներս ստեղծված պայմանների պնդում ենք թէ՝ իսկապէս այս սպառնացող կացութիւնից դուրս գալու միակ ճանապարհն է եղբայրական համախմբումը ժողովրդների, որոնք ուժեղ կը լինեն միայն այն ժամանակ, երբ կը կարենան կատարել այն ինչ որ թելադրում է իրենց շահերը.

Այս գաղափարը ժողովրդականացնելու անկեղծ ցանկութիւնը մեզ բստիպեց յանձն առնել խմբագրելու այս ամսագիրը. որի մէջ պէտք է

պարզաբանվեն բոլոր այն հարցերը որոնք վերաբերում են «Բալքանեան դաշնակցութիւնը իրականացնելուն, միանգամայն քննելով ահագին արկելքը նրա իրականանալու—Մակեդոնական խնդիրը, սրա բնական եւ խելացի լուծումը մատնանշելով:

Սրա հետ միասին պէտք է քարոզենք հայ եւ մակեդոնական յեղափոխականների միացման գաղափարը եւ մանրամասնօրէն մեր ընթերցողներին պէտք է ծանօթացնենք այն բանկզբունքների հետ, որոնց վրա հիմնված է հայկական շարժումը:

Սպասում ենք ձեր աջակցութեան:

Ընդունեցէք մեր խորին յարգանքները:

«Պետերացիա» ամսագրի
Խմբագիր Բ. Մանչիւ
Թ. Բազարճիր

ԱՆԴԼԻԱԿԱՆ «ՍՊԻՏԱԿ ԳԻՐՔԸ»

(Շար. նախորդ թիւեն եւ վերջ)

Եւ Սակայն Սրբ Ն.իքոլա Օ'քսնոր կրնար տարակուսիրեւրոպական հիւպատոսներուն կատարած քննութեանց վրայ, քանի որ այս վերջինները ոեւէ փաստ չէին ներկայացներ Համիտի կառավարութեան վերագրուած չարիքներու համար: Նոյն ինքն գնդապետ Թիրիզ. 1903ին, շատ նեղութիւն կրեց, Տէլի-Պապայի գէպքին բուն իրողութիւնն ստուգելու, որովհետեւ շարունակաբար թիրք զօրքերով շրջապատուած էր: Ստուգիւ, ասիկա մին է այն դասական միջոցներէն զոր նորին կայսերական վեհափառութեան իշխանութիւնները ի գործ կը դնեն արգիլելու համար ամէն քննութիւն իր յարմար ժամանակին: Ու հետեւեալ տողերը, որոնք պատիւ կը բերեն Վանի Ֆրանսական հիւպատոսին, ուղղուած իր անգլիացի պաշտօնակցին, կը ցուցնեն թէ ո՞ր աստիճան դժուարութեան կը բաղխին եւրոպական ներկայացուցիչները.

«Նոյն օրը (16 յունիս), Պ. Ռօպէն հաղորդեց Ֆէրիտ պէյին թէ իր ականջին մահուան սպառնալիքներ հասած են իր անձին դէմ իսլամ ստորին կարգի ամբոխին մէջ եւ այն կարծիքը տարածուած էր թէ այդ սպանութեան կառավարութիւնը հաշտ աչքով պիտի նայէր: Անմիջապէս Պոլիս հաղորդելով անկէ Ֆէրիտ պէյի եկած հրահանգները, զորս ընդունեց կատարեալ գոհունակութեամբ նոյնիսկ մեր հոն ներկայ գտնուած պահուն, կը հրամայէին որ ստիկանները միշտ ընկերանան մեզի Մուշէն դուրս: Այս պարագան կը դժուարացնէ դիւզացոց պատմութիւնները ու տրուունչները ստուգելու գործը:»

Այսպէս, այս առաջին ընթերցումէն յստակօրէն կը հետեւի սա՝ ճշմարտութիւնը թէ, եւրոպական կառավարութիւններ կանխաւ տեղեկութիւններ ստացած ըլլալով հանդերձ հեռագայ դէպքերու մասին, ինքզինքնուն թող տուած են, որ խաբեին սուլթանին սուտերէն եւ դարձեալ ծաւալեր հնարամտութիւններուն դարանակալութեան նոյն իսկ այսօր դեռ կարող չեն անցնել ապրիլի մէջ պատահած դէպքերուն վրայ սայդ տեղեկութիւններ տալ:

Փաղով ներկայ կացութեան, Մուշի անգլիական հիւպատոսին յուլիս 6ի հեռագիրը բաւական հեգնութեամբ կը պատկերացնէ զայն.

«Պատիւ ունիմ իմացնել ձեզ որ իմ յունիս 19ի հեռագրէն յետոյ երկու սպանութիւններ տեղի ունեցած են Մուշի դաշտի մէջ: Եւ որովհետեւ 15 օրէ ի վեր միայն երեք ոճիրներ գործուած են, կարծեր է յուսալ որ կարգը, եւ կամ ինչ որ հոս կարգ կը համարուի, վերջնապէս հաստատուած է»:

Կարգը կամ այդ երկրին մէջ կարգ համարուածը, 25 տարիներէ ի վեր, Պերլինի դաշնագրէն սկսեալ:

(Բրօ Արմենիա)

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ԱՌԹԻՒ

—()o()—

Պուլկարիոյ հայ գաղթականութեան Ազգ. եկեղեցական խնդիրները կարգադրելու սահմանուած որոշ կանոնագիր մը, և Պուլկարիոյ հայութիւնը ներկայացնող պաշտօնական մարմին մը գոյութիւն չունենալուն համար, յաճախ անհաճոյ դէպքերու աղբիւր կը տրուի, երբ ոեւէ խնդիր լուծելու պէտքն զգացուի սոյն կամ այն հայ համայնքին մէջ.

Մեր խօսքը, ընդհանրապէս, թաղականութեանց ընտրութեան մասին է, քանի որ հոգաբարձութեանց իրաւունքն ու պարտաւորութիւնները գծուած են Պուլկարական սրբինագիրքին մէջ. իսկ մ'իւնոյն օրինագիրքին մէջ թաղականութեանց ընտրութեան եղանակը որոշապէս գծուած չըլլալով՝ իւրաքանչիւր հայ համայնք տարբեր կերպով կը կատարէ ընտրութիւնները —տեղ տեղ Սահմանադրութեան օրինաց համաձայն՝ տեղ տեղ՝ կառավարութեան միջամտութեամբ: Առաջինները քուէարկելու իրաւունք կուտան թէ՝ պուլկարահպատակներուն, թէ՝ օտարահպատակներուն, իսկ վերջինները՝ միայն պուլկարահպատակներուն.

Արդ, ըմբռնած ըլլալով օգտակարութիւնը հաւաքական (հպատակ թէ ո՛չ-հպատակ) քուէարկութեան կուզենք գիտնալ թէ՝ Թաղ. Խորհրդոյդ և կառավարութեան միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները պաշտօնական բնոյթ կը կրեն թէ ոչ. վասն զի կ'ատարկուի թէ՝ այն թաղական մարմինները, որոնք հաւաքական քուէարկութեամբ կ'ընտրուին, և մի միայն պատրիարքարանէն կը վաւերացուին՝ կառավարութենէն իրենց պաշտօնական չեն նկատուիր:

Ամեն պարագայի մէջ կարեւոր կը համարենք ընտրութեանց եղանակի միօրինակութիւնը բոլոր հայաշատ կեդրոններուն համար. Այսպէսով վերցուած պիտի ըլլայ չարիք մը, որը, եթէ չարունակէ պահպանել իր գոյութիւնը, աղէտաբեր կրնայ ըլլալ մեր եկեղեցական գործերու ինքնավար դրութեան համար. հակառակ պարագային կառավարութեան ոտնձգութեանց պիտի զոհուին մեր Ազգ. իրաւունքները.

Եւ այս միօրինակութեան հասնելու համար անհրաժեշտ կը համարենք իւրաքանչիւր հայաշատ կեդրոնի ընտրութեանց եղանակի մասին տեղեկութիւններ հաւաքելը. որպէս զի տեղեկութիւնները իրարու հետ բաղդատելով՝ կարենանք որոշ եզրակացութեան մը յանգիլ և մեծամասնութեան ընդունած ձեւն ու եղանակը՝ իր ներկայացուցած առաւելութիւնները հանրային համեմատ հրապարակաւ առաջարկենք ընդհանուրին:

Ուստի, յանուն Ազգ. շահերուն, կը խնդրենք որ հաճիք մեր հարցումներուն պատասխանել հետեւեալ կարգաւ.

1.— Պատ. Թաղական Խորհրդոյդ պաշտօնավարութիւնը քանի՞ տարի կը տեւէ:

2.— Ձեր պաշտօնավարութեան շրջանը լրանալէ ետք նոր թաղականութիւն ընտրելու համար խորհրդոյդ առանց նախաբարութեան հրահանգին սպասելու իրաւունք պիտի ունենայ իր կողմէն ժողովուրդը քուէարկութեան հրաւիրելու:

3.— Քուէարկութեան մասնակցելու իրաւունք ունեցող ազգայիններուն ցանկը ո՞վ կը պատրաստէ:

4.— Քանի՞ տարեկանէն վեր եղողները իրաւունք կունենան քուէարկելու:

5.— Ոչ-հպատակներն ալ կը մասնակցի՞ն քուէարկութեան:

6.— Եթէ կը մասնակցին՝ որքան ժամանակէ ի վեր քաղաքդ հաստատուած ըլլալու են:

7.— Ոչ-հպատակները կրնա՞ն միանգամայն ընտրելի ալ ըլլալ:

8.— Ընտրութիւնները կատարուելէն ետքը միայն Պատրիարքարա՞ն կը դիմէք նորընտիր մարմինը վաւերացնելու համար, թէ՝ նախաբարութեան վաւերացումին ալ պէտքը կ'զգացուի:

9.— Եթէ ոչ-հպատակներ ալ ընտրուին՝ նախաբարութիւնը զանոնք ալ կը վաւերացնէ՞, և՝ օրէնքի որ յոդուածի արամադրութեան համաձայն:

10.— Եթէ խորհրդոյդ անվաւեր է կառավարութենէն, եկեղեցական կալուածները որո՞ւ անունով արձանագրուած են կառավարութեան տոմարին մէջ:

Սպասելով Ձեր պատասխանին
Կը մնանք յարգանօք

*** ***

Ց. Գ. Եթէ կան մեր կողմէն շնախատեսուած պարագաներ, հաճեցէք տոնց մասին եւս գրելու:

Նոյնք

ԲԱԶԷՆ ԵՒ ՍՈՂՈՒՆՆԵՐԸ

(Այլաբանութիւն)

Ասիական ճահճոտ վայրերից մէկում, որը բուն էր զանազան սողուններ. Երեւան էր եկել մի բազէ ու բուն դրել մի բարձր ու հաստաբուն կաղնու վրա: Այդ ծառը այնքան բարձր էր որ տիրապետում էր ամբողջ ճահճին, բազէն իր ոաղմիկ ճամբորդութիւններից վերադառնալով թառում էր ծառի կատարին թեւերը թափահարում այնքան ուժով որ ամբողջ սողունները սարսռում էին ու իրենց խոնաւ աղտոտ բունները մտնում:

Բազէի բարձրում, թարմ մաքուր օդի մէջ ապրելը, նրա խրոխտ օդը պատառող սլացքը, նրա ցուրտ արհամարհանքը դէպի ցածում ապրող ուղղները դժգոհութիւն առաջ բերին սողունների մէջ. Բայց բազէն այդ չը դիտէր՝ նրա համար սողունները գոյութիւն չունէին. նա գոհ էր միայն նրանով որ ինքը խոնաւ ծակ ու ծուկերի մէջ ապրող սողունների հետ ապրել չէր կարող նրանց ծակերում. սիրել էր միայն նոյն վայրում բուսած հակայ կաղնին որի արմատները միայն փոքր ի շատ մօտիկ էին սողուններին իսկ կատարը բարձր, մաքուր եթերի մէջ էր մխված:

Մի անգամ բազէն դեռ նոր էր վերադարձել իր արշաւանքներից, ու թեւերը թափահարելով ուզում էր հանգստանալ. յանկարծ ինչ որ մի չըշուկ լսեց իր ամբոց կաղնու տակ. վար նայեց տեսաւ որ բազմաթեւակ սողուններ հաւաքվել են ծառի տակը ու ինչ որ իրարանցման մէջ են.

Սողուններից մէկը, մի խոշոր ծարմիր հողաորդ գլուխը ոլորելն և իր երկար լորձիւնոտ մարմինը շարժելն ասում էր.

— Եղբայր, այս հպարտ, գոռոզ թռչունը, որ մեր հողի վրա է ապրում, բայց միշտ ծառի կատարին է կաւ մեր հանգիստը վրդովեց: Մի օր չը տեսանք որ վար իջնէր:

Ոաքը գետնի վրայ դնէր, միայն իր թեւերի աղմկալի թափահարումի ձայն ենք լսում և ոտզմական սուլոցը. մենք ուրիշ թռչուններ էլ ենք տեսել, որոնք բուն են դրել այս ծառի վրա, բայց նրանք վար կ'իջնում, մեն գալիս գետնի վրա, իրենց ոտքերը ցեխոտում, շատ անգամ մեզնից փոքրիկներին կամացուկ, անձայն կուլ տալիս. որովհետեւ մեզ շատ լաւ սիրում:

Պահանջենք, կամ վար իջնի, մեր կեանքով ապրի, կամ թէ հեռանայ այս ծառից. եթէ չը համաձայնի, բոլորս հաւաքվինք ծառի տակը, փորենք արմատները հանենք, ծառը տապալենք, թող նա հեռանայ, կորչի այստեղից. որովհետեւ նրա հպարտ կեանքը մեզ աւելի է ճնշում, չեչտելով սողուններիս վիճակված զզուելի կեանքի պայմանները:

— Այո, այո կրկռած գորտը, մինչեւ այդ գոռոզ բազէի երեւան գալը, դուք միայն իմ կոկորդն էիք լսում ճահճի մէջից, և դուք սիրով լսում էիք այդ ձայնը, որովհետեւ նա բարձրից չէր գալիս, այլ ճահճի միջից, ձեր բնակարանների հաւասար բարձրութիւնից, և իմ ձայնը ձեզ չէր ցնցում. որովհետեւ իմ մեղեդիները սողալն են գովաբանում, ճախրանքի, սլացքի մասին ոչինչ չեն երգում, իմ ձայնը ձեզ չէր ցնցում և ձեր մէջ նախանձ չէր զարթեցնում դէպի այն արարածները, որոնք բարձրերում են ապրում, չեն սողում. իմ երգերը ձեզ քարոզում էին գոհ լինել սողալուց, որովհետեւ սողալն է միակ և լաւ պայմանը աշխարհի վրայ ապրելու: Այս արմատախիլ անենք ծառը, բայց բազէի քնած ժամանակ, որպէս զի նա չկարողանայ թռչիլ և մեր վրէժից ազատվիլ: Հիմա նա դեռ արթուն է, տես դեռ ծառի կատարը չարժվում է: Բացի այդ այս ծառը տեղահան անելը մի օրվան գործ չէ: Երկար ժամանակ պէտք է աշխատիլ, այնպէս որ ինքը չիմանայ: Այսօր հեռանանք, վաղը առաւոտեանից կսկսինք, երբ նա կը թռչի իր արշաւանքներին:

— Լաւ է ասում, լաւ, գորտ եղբայր բոլոր սողունները միաբերան հաստատեցին:

(Շարունակելի)

ՊԵՏՕՑԻ ԳՐՔԻ ԱՌԹԻՒ

—)o(—

Սոֆիայի երիտասարդներից, Պ. Պ. Թագւոր Յակոբեան և տոքտոր անասնաբոյժ Սիմէոն Քիւ-

չիկեան յանձն են առել մեզ օգնել փութացնելու Պետոյի գրքի հրատարակութիւնը։ Մենք սիրով ընդունելով նրանց աջակցելու առաջարկը, խնդրեցինք նրանց խորհրդակցել այդ գործը շուտով գլուխ բերելու համար։ Սպասում ենք յարգելի պարոնների վերջնական որոշման գործի սկսելու համար։

Այս օրերս նրանց պէտք է ուղարկենք Վիէննայի Հ. Մխիթարեաններից մի տարի առաջ ըստացուած տպագրական պայմանները, որպէս զի նրանք այդ պայմանները աչքի առաջ ունենալով կարողանան մի գործնական որոշում տալ։ Տպագրական նիւթերը մի տարուց աւելի է որ գտնվում է Մխիթարեան տպարանական վարչութեան մօտ։ Յոյս ունինք որ մեր բարեկամ երիտասարդ պարոնները կաշխատեն այնպիսի միջոցներ գտնել, որ կարելի լինի շուտով թէ գիրքը հրատարակել և թէ առաջուանից տրված նպատակից չը շեղվել։

ՎՐԹՈ

Տպարիչ 13 հոկտ. 1904

Մեծ. Տիար խմբագիր

«Շարժում» ազգօգուտ լրագրոյ

Ներփակեալ ձեզ կուղարկեմք տեղւոյս ընթերցարանի վեցամսեայ հաշուեկշիռը եւ կը խնդրեմք որ հաճիք տնեակ մը նուիրել ձեր թերթին մէջ սոյն ազգօգուտ հրատարակութեան, որոյ երախտապարտ կը մընանք ձեզ։

Ընդունեցէք Տիար մեր խորին յարգանքները։

Ի դիմաց Հայ Երիտասարդաց Միութեան Գործադիր Ժողովոյ

Ատենադպիր. Ատենապետ
Ա. Փեշտմալճեան Երուանդ Մ. Նուրճանեան

—o—

Վեցամսեայ հաշուեկշիռ հայ երիտասարդաց Միութեան գործադիր ժողովոյ 1904 ապրիլ 10էն մինչ 1904 հոկտեմ. 10

ՄՈՒՏՔ

77 անձնաւորութիւններէ գոյացած նուէր	155.15
Գանձանակի հասոյթ	12.77
Բաժնեգիներէ գոյացած	204.60
	372 45

ԵԼՔ

Տնի համար վեցամսեայ վարձք	73.—
Թերթերուն համար վճարուած	73.50
Ընթերցարանի կարասեաց համար վճարուած	92.—
Ընթ.ի մաքրութեան համար վճարուած	24. —
Զանազան ծախքեր	17.75
Գանձապահին քով պատրաստ դրամ	93.20
	272.45

Ի դիմաց գործադիր ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Տրդատ Եաղուպեան Արտենակ Փեշտմալճեան
Գանձապահ
Գ. Մարտիրոսեան

Ը ԴՀԱՐՈՒՄ ՌՈՒՍԻՈՑ ԵՒ ԱՆԳԼԻՈՑ ՄԻՋԵՒ

Ճաբոնացիք, մանաւանդ անոնց լրտեսները սարսափ տարածած են ռուսներուն վրայ։ Ճաբոնական լրտեսին ճարպիկութիւնը առասպելի կարգը անցած է և ռուսները ամեն տեղ ճաբոնացի լրտեսի ներկայութիւնը կը երեւակայեն, կամ ինքզինքին ասոնց դաւադրութեանց հանդէպ կը գտնեն։

Անցեալ օրը պալթիկեան ռուս նաւատորմիղը ծովուն մէջ անգլիական ձկնորսական նաւերու հանդիպելով, զանոնք ճաբոնացիներու տեղ ընդունելով իսկոյն ռմբակոծեր և մեծ ջնջաններ պատճառեր է խեղճ ձկնորսներուն։

Այդ լուրը առնուելուն պէս, անգլիական կառավարութիւնը անմիջապէս խստիւ կը բողոքէ, գոհացում պահանջելով 24 ժամուան մէջ։

Անգլիական մամուլը և ժողովուրդը կը գրգռուին, և իրենց կառավարութենէն կը պահանջեն խիստ պահանջներ դնել Ռուսիոյ առջեւ։

Ժողովրդին գրգռումը այնքան սաստիկ կըլլայ, որ ան եւրոպայէն վերադարձող ռուս դեսպանին սուլոցներով և հայհոյանքներով կը դիմաւորէ կայարանը և նոյն իսկ կուզէ յարձակում գործել կառքին վրայ։

Վերջին օրերուն հեռագիրները կը հաղորդեն թէ Ցարը և իր կառավարութիւնը խոստացած են գոհացում տալ անգլիական կառավարութեան բոլոր պահանջներուն այդ տխուր միջադէպին առիթով։ Ոչ պատահական դրժբախտութիւն մը կը հռչակեն։

Հաւանական է որ այս միջադէպը բարդ հետեւանքներ չստեղծէ երկու պետութեանց համար, սակայն այն ալ անհերքելի է թէ, նոր այսպիսի միջադէպ մը կը-

---

ՓՉԱՅԱՆ ՍՏՐՈ. ԿԸ

Մայիսեան գեղեցիկ օրերից մին էր։ առաջին գարունն էր որ դիմաւորում էի Վարնայում։ Սիրաս չը համբերեց այդպիսի մի գեղեցիկ առաւօտ սենեակում մնալ, ու վճռեցի հագնվել ու գնալ ծովափի պարտէզը։

Հազիւ պարտէզ էի մտել երբ առջեւումս երեւաց մի 20–21 տարեկան պնտանի. ստրուկի խոնար աչքերով հեզ, կծանք մուրացող դէմքի արտայայտութիւնով։

Որքան ողորմելի էր մարմնով առոյգ, ըստ երեւոյթին երկաթէ բազուկների եւ իրանի տէր այդ դեռատիպիկ երիտասարդը, որի աչքերում հայկական զառամեալ ստրկութեան կնիքն էր դրոշմված։

—Մարդուկ եմ ես, ասում էր նա թուռ ու մունջ, ամբողջ մարմնովը, ամբողջ կերպարանքովը, ստրուկ, փչացած, անտանելիօրէն. խղճացէք ինձ իրենց սողունի, անմեղ սողունի, որը խայթող տեսակից չէ. ես միայն սողալ եմ ուզում, ուրիշ ոչինչ... թոյլ տուէք որ սողամ այս պարտէզում. կամաց առանց շշուկի։

Ու ես այդ ստրկական խօսուն կերպարանքի առջեւ զգ՝անք զգալով չարժվեցի տեղից ուզեցի անցնել, հեռանալ այն կենդանի ստրկութիւնից, որը մի ակնթարթում յիշեցրեց հայ ժողովրդի դարեւոր ստրկութիւնը պէսպէս ցեղերի, պէսպէս ժողովրդների լծի տակ։

Շարժվեցի առանց չնչին կասկածը ունենալու, թէ թէեւ երիտասարդ, բայց զգւելի ստրկութիւն պատկերացնող էակը կարող էր ինձ մի կերպ արգելք հանդիսանալ, իմ այն հրճուանքը, որ զգում էի աչքերովս ընդարձակ ու խիղճս ծովը գրկելովը, բոլորովին ընդհատը...

—Ո՞ւր կերթաք. տէր. կաղաչեմ. ես զձեզ կուզէի տեսնալ. կաղաչեմ. մի երթաք, լսելիք ունիմ։ Ո՛ր չափ երջանիկ եմ, զձեզ տեսնելովս. ոչ չէք գիտեր, աշխարհիս էն երջանիկ մարդուն եմ։ Երաղել չէի կրնար, ուր մնաց որ իրականութեան մէջ կը տեսնամ ձեզ։

Այդ խօսքերը ստրուկը վինձ էր ուղղուած բայց ես չէի անդրադարձել. եւ անկարող էի ըմբռնեալ հնդկական պարիան անգամ հազիւ այդ տեսակ խօսքեր ուղղէ իրեն անծանօթ մարդուն։ Ու չտապում էի գնալ ճեմելիքով։

—Բայց տէր, ձեզի կըսեմ, խնդրեմ ինչո՞ւ չէք ուզեր զձեզ պաշտող հայ պատանու մը մտիկ ընել։

Տարօրինակ բան, մտածեցի ես, ստրուկն էլ պաշտել գիտէ. բայց ի՞նչը արդեօք բռունցքը, մտրակը, ու դարձայ ստերսողին.

—Բայց ի՞նչ էք ուզում, պարոն, եւ ո՞վ էք դուք, ես ձեզ չեմ ճանաչում։

—Օհ, դուք չէք ճանչնար. ի հարկէ չը պիտի ճանչնաք, ան ալ ինձի պէս մէկը։ Բայց ես զձեզ կը ճանչնամ։ Ու ով չի ճանչնար. ամէնքն ալ կը ճանչնան զձեզ։

Այս խօսքերի հետ ստրկութեան կենդանի սիմվոլը վրաս վազեց գըրկեց ինձ ու սկսեց հա՛բոյրներ տեղալ ճակատս, երեսս, աչքերիս։

Իմ կնճռոտութիւնը անտանելի էր. այդ չնային լզվրտուքի հանդէպ. ուզեցի բարկանալ, ետ մղել. բայց անկարող եղայ, ստրուկի աչքերը պաղատում էին. հաց. կեանք եւ մտրակ։ Վերջացաւ լզվրտուքը. ստրուկը ետ քաշուեց, կրկին պաղատագին նայեց ու ձեռքերը կրծքին ծալելով, գլուխը ծռելով աւելի թոյլ ձայնով խօսեց։

—Տէր, կուզեմ ազատութեան զինուոր գրվիլ. պարզ զինուոր կուզեմ ձեր ծառան ըլլալ. կամ ձեզի պէսնելուն, կաղաչեմ, մի մերժէք։

նայ պատճառ ըլլալ որ Անգլիա աւելի կտրուկ միջոցներ ձեռք առնէ Ռուսիոյ հանդէպ, իր բրէսթիժը բարձր պահելու համար։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Պուլկար ազգային կուսակցութեան՝ որուն հիմնադիրը և առաջին պարագլուխը հանգուցեալ Սթոյիլոֆն էր, տասնամեակը լրանալուն առթիւ, այս օրերս այդ կուսակցութեան հետեւողները մեծ համագումարում մը ունին, որուն պիտի մասնակցին մօտ երեք հազար հոգի։

Մասնակցողները՝ Պուլկարիոյ զանազան կողմերէն, մասնաւոր թրէններով Սոֆիա թափուեցան։

Կառավարութիւնը ոչ միայն խոչնդոտներ չը յարոյց այդ համագումարումին դէմ, այլեւ արտօնեց որ պատգամաւորները ամբողջ գինով թռէն վերցնեն։

Կառավարութեան այդ հաճոյալի վարմունքը հանդէպ ընդդիմադիր կուսակցութեան շատ լաւ տպաւորութիւն գործած է պուլկար ժողովրդին վրայ։ Որովհետեւ այդ տեսակ վարմունքէն կը հասկցուի թէ կառավարութիւնը երբէք չի ուզեր բռնութիւններով արգելք հանդիսանայ ընդդիմադիր կուսակցութիւններու զօրանալուն։

ՃԱԲՈՆԱՑԻ ԻՇԽԱՆ ՄԸ

Մարշալ Օյամային Մուկդէնի հարաւային կողմը կատարված հսկայական ճակատամարտի մա-

---

—Բայց պարոն, ես ծառայի պէտք չունիմ եւ ոչ միջոցներ ծառայ պահելու. եւ ոչ էլ ճանաչում եմ ոեւէ մէկին որ ձեզ ծառայութեան վերցնէր։

—Այո՝ չը հասկանալ կը ձեւացնէք փրկութեան գործին կուզեմ ծառայել. իմ առջեւս քոյրս սպանեցին, բռնաբարելէն վերջը. ես ֆշիին մէջ մնայ, քոյս ատրճանակ ալ կար, ուզեցի զարնել բարբարոսը, բայց մատերս վախէն սառած էին՝ չը կրցի բլթակը շարժել։ քոյրս բռնաբարելով սպաննողը մէկ մարդ մը էր. դիւրին էր, բայց չը կրցի։

—Թողէք, Աստուած սիրէք, մի շարունակեցէք, կատաղի զգեանքով գոչեցի ես եւ օձից խայթվածի նման հեռու ցատկեցի այդ սինիք ստրուկից որը անպատուում էր իմ հոգու խորքերում վերածնող հայութիւնը...

Թողէք, դուք զզելի էք. հեռացէ՛ք գոչեցի ես, արդէն ազատված այդ սողունի չնչից որ կամաց կամաց աղտոտում էր մեր երկուսի միջեւ գտնվող փոքրիկ օդային տարածութիւնը։

(Շարունակելի)

—o—

ին առած տեղեկութեանը մէջ կը յիշուի ճաբոնացի իշխան Գանինի մասին, մասնաւոր գովասանքով մը։

Այդ իշխանը հեծելազօրքի մեծ բաժնի մը գլուխը անցած կը մղուի ճակատամարտին մէջ, եւ կը մղէ դէմը կանգնած ռուսները ու մեծ ծառայութիւն կը մատուցանէ թէ զօրքերուն եւ թէ իրեն ապարդիւն դարձնելով ռուս զօրքերու կատարած պտոյտը. կռուի ընդարձակ դաշտէն։ Իշխան Գանին միակ հեծելազինուորն է կայսերական տունէն. ծնված է 1865 թուականին, իր բարձրագոյն կրթութիւնը ըստացած է Ֆրանսայի մէջ. մասնակցած է Չին-Ճաբոնական պատերազմին, եւ երեք տարի առաջ այցելած է գերմանական կայսեր։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

14 հոկտեմբերին Պոլսէն կը հեռագրեն թէ հիւպատոսական տեղեկագիրներէ կը հասկցուի որ հոկտեմբեր 2.7 յոյն հրոսակխմբերը Լեսքովիքի մէջ սպաններ են 5 պուլկար և Լերինի մէջ երկու։

— „Վէշերնա բոշթա“ թերթին Պոլսէն կը հեռագրեն հետեւեալը. „Կը վստահեցնեն թէ շաբաթէ մը ի վեր Եըլտըզի մէջ տեղի կունենան արտակարգ և երկարատեւ պատերազմական խորհրդակցութիւններ։ Այդ հետաքրքիր խորհրդակցութիւններուն նիւթը ամենախիստ կերպով գաղտնիք կը պահուի։ Դիւանագիտական շրջանակներու մէջ շատ կը հետաքրքրուին և ճիգեր կը թափուին այդ խորհրդակցութիւններուն նպատակը հասկնալ։

— Լուր տարածուած է որ թրքական այդ արտակարգ պատերազմական խորհուրդը կը զբաղի Պալքաններու մէջ պատահելիք ընդհարումի խնդրով, և կը մտածէ շուտով որոշել պատերազմական պատրաստութիւններու խնդիրը։ Հանդէպ Աւստրիոյ որը շարունակ կապառնայ իր սպաներուն թիւը Մակեդոնիոյ մէջ աւելցնելու համար և կամ Պուլկարիոյ հանդէպ, որը կը մեղադրուի Թուրքիան պատերազմել գրգռելու համար։

ՌՈՒՍԻԱ

„Նովոյէ վրեմիա“ թերթը պախարակած է Մոսկվայի միլիոնատէրերը որովհետեւ մինչեւ հիմա պատերազմի համար տուած են միայն 600 հազար բուբլի, մինչդեռ անոնցմէ միայն մին մէկ պարոկուհիի մը նուիրած է ոսկեայ լոգարան մը և շատ մը ադամանդեայ զարդեր սենեակի և զարդարանքի համար, իսկ ուրիշ մը մէկ թեթեւ վարքով կնոջ ադամանդէ սանձ մը։

— Քրաքովեայէն Վիէննա կը հաղորդեն 14 հոկտեմբերին որ գերմանական սահմանը անցնող ռուս փախստական զինուորներուն վրայ հրացան արձակուեր է։

— Ցարը հրովարտակով մը Ալէքսիեւէն առած է Մանջուրիոյ զօրաց գլխաւոր հրամանատարութիւնը իսկ երկրորդովը Քուրոբաթկինը հրամանատար նշանակած։ Ռուս թերթերը կը շնորհաւորեն Ցարին այդ քայլը։

— Պրիւքսէլէն „Ստանտար“ թերթին կը հեռագրեն թէ Ռուսիա 1350 ֆրանքի փոխառութիւն մը կը կնքէ։

— Կովկասի փոխկառավարչապետ գեներալ Ֆրէզէ նշանակված է Վիլնայի նահանգապետ։

— Ամերիկայի ռուս դեսպան Քասսինի յայտարարած է որ Ռուսիա շատ շնորհակալ է միացեալ նահանգներուն հաշտութիւն կայացնելու միջամտելու պատրաստականութեան համար։ բայց Ցարին կառավարութիւնը վճռողականօրէն կը մերժէ այդ տեսակ միջամտութիւն մը։

— Հոկտեմբեր 6 Ռուսիոյ Պոլսոյ դեսպանը կրկին Թուրքիէն պահանջած է 78 թուականէն մնացած պարտքը, որուն գումարը 600 հազար թրքական ոսկի է։

— Կառավարութիւնը Սիմֆիրոպոլի հայերուն արտօնած է ազատօրէն կառավարեն իրենց դպրոցները։

Ատկէ կը եզրակացնեն թէ շուտով պիտի փոխուի այն որոշումը ըստ որում հայ եկեղեցական կալուածները կը դրուին կառավարութեան տրամադրութեան տակ։

ՊԱԼԹԻԿԵԱՆ ՆԱՒԱՏՈՐՄԻՂԻ ՄԱՍԻՆ

—}o(—

Գերմանական թերթ մը Բեթերսպուրկէն կիմանայ թէ Անգլիական դեսպանը անգլիացի ձկնորսներուն հետ պատահած դէպքը դժբախտութիւն մը կը նկատէ։ Ռուս թերթերը Ռուսիոյ վարձատրութեան առաջարկը կը քաջալերեն. սակայն Անգլիան կը մեղադրեն որ նախապէս ձկնորսներուն իմաց չէ տուած։

— „Ցայթ“ թերթը կիմանայ թէ Պալթիկեան նաւատորմիղին հրամանատար Բօժտէստվէնսկին կը հաղորդէ որ նաւերէն մէկ քանին մեքենաները փչացուած են, այդ պատճառով. հակառակ Ցապանիոյ արգիլումին ինքը խարիսխ ձգած է նաւահանգստին մէջ։

Ցապանիոյ արտաքին, և միւսնոյն ատեն ծովային նախարարը Վիգո գացած են քննելու ռուսական փչացուած երկու զրահաւորները։ Եթէ նաւերուն նորոգումը 24 ժամէն աւելի տեւելու ըլլայ նախարարները համապատասխան կարգադրութիւններ պիտի ընեն։

Վիգո հասած ռուս սպաները կը յայտարարեն որ քրիստիքական գիշերը իրենք նկատեր են որ երկու թորփիլանաւեր սողացեր են ռուս նաւերուն միջեւ։ գրտնուած տարածութիւնները։ Ցապաները վախցեր են, որովհետեւ կարծեր են թէ ճաբոնացիները յարձակում կը գործեն։

Ասոնք կը պնդեն որ թորբիլանաւերուն վրայ թնդանօթներ նկատած են և նաւասաներն ալ բոլորովին ձկնորսներու չէին նմաներ։ Բացի այդ չը գիտեն թէ վիրաւորուածներ կան և շատ կը ցաւին պատահած դժբախտութեան մասին։

— „Տէյլը էքսբրէս“ թերթը կը գրէ թէ Ցարը դժբախտ դէպքի մասին լսած պահուն սկսեր է լալ։

— Ռուս. արտաքին գործոց նախարարութիւնը շատ դժգոհ է որ ծովային վարչութիւնը շարունակ իր առջեւ դժուարութիւններ կը սատեղծէ։

— Անգլիական ծովային վարչութիւնը հրամայած է Եւրոպական ջրերու մէջ գտնուող երեք նաւաբաժիններուն միանալ որոշեալ տեղ մը։ Ծովային բոլոր բսպաները պաշտօնի կանչուած են։

ՌՈՒՍՕ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հոկտ. 14 ռուս հեռագրական գործակալութեան Մուկտէնէն կը հեռագրեն թէ 13ի երեկոյին Մուկտէնի քով ճակատամարտը սկսեր է։ Ճաբոնացիները յարձակած են Երթագուի վրայ, որը և անոնց ձեռքը անցեր է։

—Բարիզէն Բերլինի թերթի մը կը հեռագրեն թէ հոն կը կարծեն որ ռուս իշխան մը պիտի երթայ Լօնտոն ներողութիւն խնդրելու, և բացի այդ կը ենթադրուի թէ ամիրալ Բօժտենսվենսկի ետ պէտք է կանչուի ինքզինքը արդարացնելու համար։

—Բօսիէթ ծովածոցին մէջ ճաբոնական թորփիլանաւեր երեւցեր են։

—Շանխայէն կը հաղորդեն թէ շոգենաւ Կանտոն ճեղքած անցած է Վլատիվոսթոքի պաշարողական շղթան։

—Մուկտէնէ հաւասի գործակալութեան կը հաղորդեն որ զօրքերը ցրտէն կը նեղուին. Մուկտէնի հարաւային կողմը բոլորովին ամայացած է։ տեղացիները ամէնքն ալ փախած են։ Մուկտէնը լիքն է փախստականներով։

—Բորթ Արթուրի պատերազմական նաւահանգիստէն կը հաղորդեն որ հոն պատերազմական մեծ պարտաստութիւններ կը տեսնուին։

—Թոքիօէն Լօնտոն կը հեռագրեն թէ՝ ռուս գերիներէն մէկ քանին փորձեր են փախչիլ կամ յարձակում գործել իրենց պահապաններուն վրայ. պահապաններուն այժմ խիստ հրաման տրուած է, այնպէս որ գերիներու կողմէն ոեւէ անհնազանդութեան նշան մը մահով պիտի պատժուի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ

—

Շնորհակալութեամբ ընդունեցինք Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի Քարտէզը, չքեղ կազմով։

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ Ռուսաստանում կէս բուբլի։ Ամեն հայ պարտաւոր է ունենալ այս սիրուն և ժան ու բաւական խնամքով պատրաստուած քարտէզը։

Հասցէ՝

Բենիամին տէ Էսիւսեան Արմենիկ

Տ'horoy

Բիւ ը լեֆոյ տը Շիմի

ԺԸՆԷԼ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցառաջիկայ չորեքշաբթի, ամսոյս 20-ին «Պուլկարիա» թատրոնի մէջ, Պ. Ս. Ծոցիկեանի նախաձեռնութեամբ և «Վարիէթէ» խումբի բարեհամբաւ մասնակցութեամբ պիտի ներկայացուի Ինպատ Հայկ. Ընթերցարանի։

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ

(Գիժէտիա 3 արարուածով)

Հեղինակութիւն Ց. Պարոնեանի, փոխադրութիւն Վրոյրի և Սարդարեանի։

Վարչ. Հայկ. Ընթերցարանի

(ԿՆՔՔ)

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Տարին վերջանալու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը դեռ իրենց բաժնեգինները չեն վճարած։

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին։ Ինչպէս կերեւի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթը տէմբրը ձրի կառնենք, գրաշարները ու տպարանները ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր, այլ օդով կապրինք։

Փիչ մը ազնիւ ըլլալու են մեր վճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք ղրկեր մարդու։ Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ։

Խմբագրութիւն

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна